ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2023 թվականի փետրվարի 28-ի, ժամը 14:00-ի նիստի
N 5 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Լեզուների ամբիոնի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու **Աննա Ռուբենի Ղարսլյանի «Տնտեսագիտական բառապաշարի դասավանդումը լեզվաբանական մեթոդաբանությամբ»** դասախոսությունների հրատարակությունը երաշխավորելու մասին հարցը:

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Թ.Մ.Մկրտչյան**:

Զեկուցողը նշեց. հրատարակության ներկայացված դասախոսությունների հիմնական նպատակն է բուհական դասընթացի ծրագրի շրջանակներում տնտեսագետ ուսանողին սովորեցնել նաև մասնագիտական բառապաշարի ճանաչողական ուղիները, տերմինների իմաստային դրսևորումներն ու մասնագիտական գրագետ խոսք կառուցելու նորմերը, տերմինների լիարժեք ճանաչողությամբ բարելավել տնտեսագիտական գրականություն կարդալու հմտություններն ու կարողունակությունները: Լեզվական քննության է ենթարկված արդի հայերենի մոտ 500 տնտեսագիտական տերմին, որոնք մասնագիտական տարբեր ոլորտների բառեր և կայուն կապակցություններ են՝ ուսումնասիրված ստուգաբանական, բառակազմական, իմաստագործառական, քերականական, ոճաբանական մոտեցմամբ: Աշխատանքն աչքի է ընկնում քննության առարկայի համակողմանի վերլուծությամբ, հարցադրումների ու դրանք քննելու գիտական խորությամբ, քննության առարկայից բխող հիմնավորված տեսական եզրահանգումներով և գիտական պատշաճ մակարդակով: Գիրքը բաղկացած է 4 մասից՝ կառուցված թեմատիկ պլանավորման և ըստ դասաժամերի մատուցման սկզբունքով: Նյութերը շարադրված են գիտաուսումնական ոճով: Յուրաքանչյուր թեմա ունի հստակ կառուցվածք, հենակետային բառեր, դասախոսության տեքստ, տեսական գրականություն:

Դասախոսությունների վերաբերյալ ստացվել է 2 դրական կարծիք.

1. Վ.Ռ.Մուրադյան՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի լեզուների ամբիոնի ավագ դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու:

2. Ա.Ե.Երկանյան՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի լեզուների ամբիոնի ասիստենտ, բանասիրական գիտությունների թեկնածու:

Բոլոր կարծիքներում նշվում է, որ ներկայացված աշխատանքը արդիական է և բազմաբովանդակ, համապատասխանում է լեզուների ամբիոնի «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի ծրագրի նյութերին: Դասախոսություններն օգտակար են տնտեսագիտական ուղղվածությամբ սովորող ուսանողներին, տնտեսագիտական բառ ու խոսք մատուցող դասախոսներին և, ընդհանրապես, տնտեսագիտական բառապաշարի առանձնահատկություններով հետաքրքրվող մասնագետներին:

ՈՐՈՇԵՑԻՆ.-

Հիմք ընդունելով գրախոսների դրական կարծիքները, լեզուների ամբիոնի, կառավարման ֆակուլտետի խորհրդի և գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի նիստերի որոշումները՝ լեզուների ամբիոնի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու **Աննա Ռուբենի Ղարսլյանի «Տնտեսագիտական բառապաշարի դասավանդումը լեզվաբանական մեթոդաբանությամբ»** դասախոսությունները երաշխավորել հրատարակության՝ հեղինակի միջոցներով: Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն. կողմ՝ 52, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Դարբինյան**

2023 թ. փետրվարի 28
Երևան